

9-րդ դասարան

ՀԱՐԳԵԼԻ ԴԻՄՈՐԴ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջադրանքների գնահատման սանդղակ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐԸ	ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՄԻԱՎՈՐԸ
1.	0.5
2.	0.2
3.	1
4.	1
5.	0.5
6.	0.5
7.	0.2
8.	1
9.	1
10.	1

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողած տառերը.

Խոչ_ը_նդոտ, այծ_լ_ամ, ճտ_ք_ավոր, Նվար_դ_, դողերո_ց_ք, չ_դ_ջիկ, զի_ջ_ել, քողտի_կ_,
ս_փ_րթնել, գոտ__և_որել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Արտագրել, մեծատառ գրել ըստ անհրաժեշտության.

Դեղին ծով, Գագիկ Առաջին, Վերին Կարմիրաղբյուր, Նիագարայի ջրվեժ, Գեղամա լեռներ, Միմեն Ա երևանցի կաթողիկոս, Երևան քաղաքի պատմության թանգարան, Կոմիտասի անվան զբոսայգի, Մխիթարյան միաբանություն, «Ռսկան Երևանցի» տպագրատուն, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան, Սահմանադրության օր, Ֆրանսիայի հրապարակ, «Անբան Հուռին» հեքիաթը, Էլ Սալվադորի Հանրապետություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.

երկկողմ, թղթադրամ, ինքնուս, հրավիրատոմս, գեղարվեստ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4.

ականջը գցել-իմաց տալ, աշխարհ տեսնել-շրջագայել, պոչը կտրել-հեռացնել, քարը քարին չթողնել-ավերել, օձիքը բռնել-մեկին կպչել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5.

Օրանջիա, գույներ, ձորակ, գարուն, մասրենիներ, բուրմունք, վարդեր, կեսօր, արփի, քարեր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Կազմել տրված գոյականների հոգնակին.

Բանվորներ, այգեգործներ, մրցադաշտեր, մատենագիրներ, կռունկներ, կուսակիցներ, մարդիկ, արքայադուստրեր, հարսներ, արկղեր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7.

գալիս ենք – սահմանական եղանակ, անկատար ներկա, առաջին դեմք, հոգնակի թիվ, չեզոք սեռ
գործեին – ըղձական եղանակ, անցյալ, երրորդ դեմք, հոգնակի թիվ, ներգործական սեռ
չես բերի – ենթադրական /պայմանական/ եղանակ, ապառնի, երրորդ դեմք, եզակի թիվ,
ներգործական սեռ

մի՛ խոսիր – հրամայական եղանակ, ապառնի, երկրորդ դեմք, եզակի թիվ, չեզոք սեռ

պիտի բացվեն – հարկադրական եղանակ, ապառնի, երրորդ դեմք, հոգնակի թիվ, կրավորական սեռ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8.

Վրա, ներքո, տակ, հետո , մեջ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9.

ա/ Սեղանի գլխին՝ փառավոր բազմոցի մեջ, նստել էր ամրոցի տիրուհին:

բ/ Լիլիթը նայում էր ճերմակափետուր կարապներին և հիանում նրանց գեղեցկությամբ:

գ/ Աշխատում էր վանել իրեն տանջող մտքերը, սակայն ապարդյուն:

դ/ Ծովն ավելոծվում էր, և նրա ալիքները Սմբատին տանում էին դեպի հեռավոր հորիզոններ:

ե/ Մոտեցավ սեղանին, նայեց փոքրիկ ժամացույցին. արդեն ժամը երկուսն էր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10.

ա/ Քաղաքի առօրյա իրարանցումից հեռու նրբացքներով քայլում էր մի երիտասարդ:

բ/ Հին աշխարհի՝ մարդկությանը թողած յոթ հրաշալիքներից են եգիպտական բուրգերը:

գ/ Քարի մշակման այդ բնագավառը՝ խաչքարը, պատկանել է միայն Հայաստանին և հայ մարդուն:

դ/ Տորքը, որ սերել է Հայկի թոռ Պարսամից, հակառակ իր նախահոր, դժնյա հայացքով մի մարդ է:

ե/ Անդրկովկասի բնության անձեռակերտ մի անկյունում՝ գեղաշուք այգեստանների մեջ, կա մի քաղաք՝ Շամախի անունով: